№ 29 ՇԱԲԱԹ, 8 ՓԵՏՐՈՒԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ 1919 ՏԱՐԻ ՇԱԲԱԹ, 8 ՓԵՏՐՈՒԱՐԻ № 29

ეროვნული ბიბლიოთეკა

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի

Խմբագրութիւնը բաց է ամէն օր առ. ժամը 9-ից մինչև 3-ը։ Յօդուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։ Յօդուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։ Ընդունուած յօդուածները, որոնց տակ չէ գրուած վարձատրութեան պահանջ՝ կը համարուեն ձրի։

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԷԿ

Յայտարարութիւններն ընդունւում են ամէն լեզուով տողատեղին առաջին երեսում 75 կոպ., իսկ վերջին երեսում՝ 50 կոպ. Բժիշկների և աշխատանք փնտրողների համար որոշ զեղչ։ Մահազդի համար 15 ռուբլի։ Յայտարարութիւնները նոյն օրուայ թերթի համար ընդունւում են մինչև ժամը 2-ը։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1919 թ.
ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ
ՕՐԱԹԵՐԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐԻ 1-ԻՑ ՆՈՐ, ՄԵԾԱՑՐԱԾ ԴԻՐՔՈՎ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է.

1 ամիսը	10 ռուբ.
3 »	25 »
Հատավաճառ	70 կոպ։

Հասցէն՝ Тифлисъ, Головинскій пр. № 25.

Գրասենեակը բաց է ամէն օր առաւ. ժամը 9-ից մինչև 3-ը, բացի կիրակի և տօն օրերից։ Телефонъ 10—99.

Կիրակի, փետրուարի 9-ին

Ռեբեկա Կարապետեան Մալինեանի

մահուան քառասնօրեակին, Մուղնու ս. Գէորգ եկեղեցում, ցերեկուայ ժամը 10 և կէսին կը լինի պատարագ, որից յետոյ հոգեհանգիստ է կատարուելու հանգուցեալի յիշատակին, որի մասին յայտնում են հարազատներին, բարեկամներին և ծանօթներին հանգուցեալի ամուսինն ու երեխաները։ 1—1

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱՅԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Ամսիս 11-ին, երեկ. ժ. 4 և կէսին, տեղի կունենայ դասախօսութիւն կուսակցութեան բիւրօյում (Головин. 25).

Ի. Թ. ԱՄԻՐԵԱՆԸ

կը խօսէ

Կուսակցութեան ծրագրի եւ տակտիկայի

մասին։

Խնդրւում է ուսանողական և աշակերտական ֆրակցիաների անդամներին և համակրող ուսանող-ուհիներին և աշակերտ-ուհիներին ճիշտ ժամին ներկայ գտնուել։

3—1 Պրեզիդիում

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱ

Կիրակի, փետրուարի 9-ին, ժամը 4-ին, ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ (Абасъ-Абадская пл.) կը կայանայ Հ. Ժ. Կ. Աշակերտական ֆրակցիայի

ԱԿՈՒՄԲԻ ԲԱՑՈՒՄԸ

Հրաւիրւում են աշակերտական և ուսանողական ֆրակցիաների անդամները և համակրողները։

2—1 Գործադիր Կոմիտէ

ԳՈՂԹԱՆ շրջանի Թիֆլիսաբնակ հայրենակիցները կիրակի, առաւօտեան ժամը 12-ին Արտակ III գիմնազիայի դահլիճում (մուտքը Վելեամինովսկ. փող.) հրաւիրւում են

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՕՐԱԿԱՐԳՆ Է.—
1) Հաշուէտուութիւն և զեկուցում Գողթան կոմիտէի վարչութեան.
2) Զեկուցում Գողթնից ուղարկուած յատուկ պատգամաւորի.
3) Ընտրութիւններ.
4) Մի քանի այլ խնդիրներ։ 1—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
«Кавказское Страховое и Транспортное Общество».
Հիմնական դրամագլուխը 2,000,000 ռ.

Վարչութիւնը սրանով յայտարարում է, որ սկսուել է գոյքերը կրակից ապահովագրելու ընդունելութիւնը, այն է՝ շինութիւնների, տնային շարժական կայքի, ապրանքների, ֆաբրիկաների և գործարանների։ Վարչութիւնը գտնւում է Սոլոլակսկայա փող. № 8 տանը։ Տելեֆոն № 11։

Խորհրդի նախագահ՝ Ար. Ն. Միլեան։ ◆ Վարչութեան նախագահ՝ Ս. Խ. Սուլխանեան։ ◆ Վերատեսուչ՝ Ա. Կ. Կեյբեր։
(շ. .ե) 10—6

ԲԺԻՇԿ
ԳՐ. Յ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
Նախկին ասիստենտ Ժընևի համալսարանի կլինիկաների և պրոֆես. Oltramare-ի վեներական հիւանդութիւնների մասնագիտական բաժանի։
ՆԵՐՔԻՆ և ԿԱՆԱՆՑ հիւանդութիւն. մասնագէտ ՎԵՆԵՐԱԿԱՆ (ՍԻՖԻԼԻՍ, ներարկումն «606»-ի և «914»-ի), ՄԻԶԱՄԵՌԱԿԱՆ (ՀԻՆ և ՆՈՐ ՏՐԻՊԵՐ և նրա կոմպլեկացիաները) և ԿԱՇՈՒԻ ցաւերի։
Էլեկտրաբուժական կաբինետ
Ընդունելութիւնն ամէն օր, առաւ. ժ. 10-ից 1-ը, երեկ. 4-ից 6-ը։ Կիրակի օրերը միմիայն ժ. 12-ից 1-ը։ Կիրոչնայա, № 11։ 100—32

ԲԺՇԿԱՊԵՏ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(Նախկին Դաւոս սանատորիայի ասիստենտ)։
Ներքին և երեխայոց հիւանդութիւնների մասնագէտ, թոքերի և սրտի հիւանդ.։ Ընդունելութիւնը ամէն օր երեկոյեան ժամը 5—7-ը։ Սոլոլակ, Ռտիշչևսկայա 3, հեռ. 16—69, տ. օ.) 100—32

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ
Նախկին ասիստենտ Բեռլինի եւ Մոսկուայի համալսարանների կլինիկաների։ Մասնագէտ ներքին հիւանդութիւնների—թոքախտի և սրտի. ընդունելութիւնը՝ իր բնակարանում և լոյսի ու էլէքտրոբուժական կաբինետում։ Հետազօտութիւնը և բժշկութիւնը X ճառագայթներով։ Ամէն օր, 9—1 և 5—8 ժամը երեկ. Բեհբուտովսկայա փ., № 23։ Հեռ. 7—92։ 100—42

ԱԿԱՄԱՅ ՄԵՐԿԱՑՈՒՄՆ

«Ժողովրդի Ձայնի» փետրուարի 4-ի № 25-ում տպուած է Դաւիթ Ղամբաշիձէի մասնաւոր նամակը, որտեղ այդ պարոնը, հեռուոր Անգլիայից, ի միջի այլոց, հայերիս անուանարկելու, վրացական շրջաններում մեր դէմ թշնամական տրամադրութիւնն աւելի ևս զօրացնելու անվայել, տգեղ դերն է իր վրայ առնում։

Ղամբաշիձէն գրում է, որ Անգլիայում ու Ֆրանսիայում ապրող տասնեակ հազար հայեր, որոնց «տրամադրութեան տակ կայ մեծ դրամ, դիմում են ամէն տեսակ միջոցի, համոզելու հասարակական կարծիքն այն բանում, որ իբր, եթէ «հերոս» հայերը չկանգնեցրին գերմանացիների առաջխաղացումը դէպի արևելք և իրենց թնդանօթներով չոչնչացրին թիւրքերին ու չտիրեցին ամբողջ Փոքր Ասիային,—դրա պատճառը վրացիների դաւաճանութիւնն է»։

Ասել կուզի, վրացիներին սևացնելու, ձգելու, իսկ իրենց ջատագովելու, բարձրացնելու համար, հայերը ոչ միայն շահագործում են իրենց տրամադրելի մեծ դրամն ու թուական առաւելութիւնը Եւրոպայում, այլ և միջոցների մէջ խտրութիւն չեն դնում՝ յայտնապէս շինծու, ստայօդ լայն ինֆորմացիայի շնորհիւ խեղաթիւրելու պատմական փաստերն ու տուեալները, որոնցով Դաշնակիցների աչքում «արատաւորեն վրաց ժողովուրդը»։

Այսպէ՞ս է արդեօք։

Հայ ազգի իր ույժերից վեր ակտիւ մասնակցութիւնը համաշխարհային պատերազմին, նրա տուած հսկայական զոհերը կռուի դաշտում, իր հայրենիքի պատմական սահմաններում ու Տաճկաստանում, նրա կրած անթիւ, անհաշիւ վնասներն արնաթոր այս հինգ տարուայ ընթացքում, նրա անբիծ հաւատարմութիւնը իր հզօր Դաշնակիցներին նրանց փորձութեան ամենածանր օրերին անգամ,—այնքան պարզ են ու ակնյայտ, որ ոչ մի կարիք չկայ նրա արդար դատը ծուռ, անվայելուչ միջոցներով պաշտպանելու, ուրիշին նսեմացնելով, նրա դժբախտութեան վրայ իր բախտը հիմնելու։

Նախ այդ։

Երկրորդ՝ նկարագրելով վերջին ամիսների պատմա - քաղաքական դէպքերը Մերձաւոր Արևելքում և բնորոշելով իրենց դերն ու դիրքը տաճիկների և գերմացիների առաջխաղացման օրերին, շատ բնականաբար, հայերը չեն կարող չխօսել նաև իրենց հարևանների մասին, որոնք անմիջապէս կապուած են եղել այս անց ու դարձի հետ։ Իսկ եթէ վրացիք կարդալով այդ, պատմական անցքերին իրենց սրտի խորքերում տալիս են նրանց ճշգրիտ անունը և դրանից իրենք ճնշւում են, մի՞թէ դրանում մեղաւոր են հայերը։

Երրորդ՝ Արևմտեան Եւրոպայում հայերին ճանաչել տալու, դէպի հայ ժողովուրդը դրական տրամադրութիւն ստեղծելու, նրա առաքինութիւնները ժողովրդականացնելու և համակրանք առաջ բերելու գործը յանձին Պօղոս Նուբար փաշայի, գտնւում է այնպիսի պատկառելի, զգոյշ և տակտով մարդու ձեռքում, որ պ. Ղամբաշիձէի յայտարարութիւններին չի կարելի չվերաբերուել մի առանձին կասկածով։

Ընթերցողն, անշուշտ, զգացել է, կարդալով վրացի հայրենասիրի նամակը, թէ ինչպէս նա վրդովւում, զայրանում է, որ հայերն այդպէս անխղճօրէն մեղանչում են ճշմարտութեան, պատմական իրողութեան դէմ, սև քօղ ձգելով Վրաստանի պայծառ դէմքին։

Այդ բանն այնպէս ազդում է «հայրենիքից բոլորովին կտրուած, բոլորովին միայնակ» Ղամբաշիձէի վրայ, որ նա, ինչպէս ինքն է գրում, «ստիպուած է տարօրինակ պայքար մղել նրանց դէմ, լրագրներում յօդուածներ տպելով և ժողովրդական դասախօսութիւններ սարքելով»։

Լոնդոնում կազմած այսպիսի դասախօսութիւններից մէկի ժամանակ պ. Դաւիթ Ղամբաշիձէն այնքան ոգևորւում է իր ազգի հերոսական քաջութեամբ, որ իսկապէս մի «տարօրինակ» անպարկեշտութեամբ վրացիների մասնակցութիւնը համաշխարհային պատերազմին նկարագրում է այսպէս.

«Պատերազմի սկսուելիս փոքրիկ Վրաստանը զինում և կռուի դաշտ է ուղարկում երեք հարիւր յիսուն հազարանոց մի զօրաբանակ, որից, աւա՜ղ, տուն են վերադառնում միայն երեսուն հազար հոգի, մնացածներն իրենց գլուխը դնում են Դաշնակիցների պաշտպանած արդար գործի համար։ Իսկ երբ կազմալուծւում, քայքայւում է ռուսական զօրքը Եւրոպական Ռուսաստանում ու Կովկասի ճակատում, և օգտուելով այդ բանից, գաղանաբարոյ Վիլհելմն ու Սուլթանը յաղթական արշաւում են դէպի Արևելք, դէպի առասպելական Հնդկաստանը,—վրաց ժողովուրդը մի մարդու պէս, զէնքը ձեռքին, ելնում է այդ բռնակալ մեծ ոճրագործների և չափազանց անհաւասար կռւում յաղթուած, առ ժամ ընդունում և համակերպւում է գերմանացիների գերիշխանութեանը»…

Կարծում եմ, բացատրութիւններն աւելորդ են. հանգամանքներին ծանօթ, իրազեկ ընթերցողը լաւ է հասկանում, թէ ո՞վ է մեղանչում արդարութեան, իրողութեան դէմ, արջի ծառայութիւն մատուցելով այն ազգին, «որի օգտին, որի համար 18 ամիս նա պրոպագանդա է մղել Անգլիայում»։

Հայագն

ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԵՐ

Գերման բոլշեւիկների պարտութիւնը Բրեմենում։

Արաբիայի եւ Հայաստանի անկախութեան ճանաչման լուրը։

Սազոնովը Հայաստանի մասին։

Գեներալ Ուօկերի մեկնումը Կարս։

Տեխնիքական յանձնաժողովը դէպի Հայաստան։

Չեխօ-սլովակների պահանջը։

ՄԱՄՈՒԼ

«Մշակ»-ը «Թիֆլիսի հայ բուրժուազիան եւ Հայաստանի տագնապը» խորագրի տակ առաջնորդողում շեշտելով Հայաստանում ստեղծուած ծանր դրութիւնը շնորհիւ սովի և համաճարակի, հարց է տալիս Թիֆլիսի հայ բուրժուազիային, թէ ինչ է նա մտադիր անելու իր պարտքը ժողովրդի առջև կատարած լինելու համար։

Եւ որովհետև նոր-մշակականների մարգարէն՝ Մարքսը, հրամայել է, որ ամէն մի կուսակցութիւն պատասխանատու լինի այս կամ այն դասակարգի համար, իսկ իրենք մշակականները կուզէին, որ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը հաշուուի, որպէս Թիֆլիսի հայ բուրժուազիայի կազմակերպութիւնը, և այդպիսով հնարաւորութիւն տայ «Մշակ»-ի սոցիալ-դեմոկրատիային համարուել գոյութիւն չունեցող հայ պրոլետարիատի կուսակցութիւն, ուստի թերթը հարցապնդում է անում մեր կուսակցութեանը.

«Մենք պահանջում ենք մասնաւորապէս Հայ Ժողովրդական Կուսակցութեան կենտրոնական կոմիտէից և նրա պաշտօնական օրգանից, որոնք ներկայացնում են այդ դասակարգը նրա քաղաքական պրետենզիաներով, օր առաջ հրապարակել, թէ ինչ է անում նրա հասարակական բազիսը կազմող զանգուածը մեր դեմոկրատիայի ճգնաժամի հանդէպ՝ իր և իր կուսակցութեան գոյութեան իրաւունքը հիմնաւորելու համար»։

Ահա ձեզ մի քանի տողերի մէջ հրաշալի կերպով ամփոփուած Ծապլուարի դասակարգային աշխարհայեացքը։

Թէ ինչ է անում Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը իր պարտքը ժողովրդի առաջ կատարելու համար, այդ մասին գիտէ հայ հասարակութիւնը և հայ ժողովուրդը, և մենք բնաւ ոչ մի կարիք չենք զգում այդ մասին հաշիւ տալու մեր ծապլուարական ֆանտազէօրներին, որոնք ստանալով 300 ձայն Երևանի ընտրութիւններին և 430 ձայն (ռուսների հետ միասին) Թիֆլիսում, կամենում են մեր գըլխին վերահսկիչի դեր կատարել։

«Մշակ»-ը հայ ժողովրդի մասին շատ սխալ հասկացողութիւն ունի, եթէ կարծում է, որ այդպիսի եղանակով կարող է «սոցիալ-դեմոկրատիային» որոշ տեղ տալ նրա շարքերում։

—

Վրացական թերթերը արտայայտում են իրենց կարծիքները փետրուարի 2-ին կատարուած Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնների հետևանքների մասին։

«Էրթոբա» (վրաց սոց.-դեմոկրատների օրգանը) գրում է, ի միջի այլոց, հետևեալը.

«Քաղաքային ընտրութիւնները երբէք չեն կատարուել այնպիսի թշնամական մթնոլորտում, ինչպէս այս տարի։ Ամէնքը հակառակ էին, [illegible]

Բայց չնայած այդ բոլորին, [illegible] ընտրողների 50 տոկոս, այսինքն նրանց քանակի կէսը։ [illegible]

«Թիֆլիսի ընտրողները [illegible]

Ինչ վերաբերում է [illegible]

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Թիֆլիս, 8 փետրուարի

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

—o—

Անգլիական ու ֆրանսիական միսսիաներից յետոյ Թիֆլիս ժամանեցին՝ ամերիկական ներկայացուցիչները, որոնց գալուստը չի կարող հոգեկան առանձին հրճուանք և բաւարարութիւն չըտալ այն բոլոր մանր ազգութիւններին, որոնք ՝իրենց ապագայի ու քաղաքական վիճակի վերջնական լուծումը կապում են դեմոկրատիկ և մարդասէր համաշխարհային հռչակ ունեցող պետութեան միջամտութեան հետ:

Այն ժամանակ, երբ պատկառելի հասակ ունեցող Եւրոպան մի քանի բացառութիւններով դեռ տանջւում էր հակադեմոկրատիկ կարգերի ծանր ու բռնապետական լծի տակ, երբ եւրոպացիների ֆիզիքական ու բարոյական բոլոր ուժերն ու ձըգտումներն ուղղուած էին նոր իրաւակարգերի ստեղծմանը, այդ ժամանակ, դեռ XVIII-րդ դարում հեռաւոր երիտասարդ Ամերիկան առաջինն էր, որ իսկապէս և իրապէս կարողացաւ հաստատել իր սահմաններում այնպիսի դեմոկրատիկ և մարդավայել կարգեր, որոնք ոչ միայն անխախտ մնացին Ամերիկայում, այլ և անցան Ովկիանոսի այս կողմը, որպէս հիմք ծառայելով դէպի ազատութիւնը ձգտող Եւրոպայի ճնշուած ազգերի և պետութիւնների համար:

Ազգերի ինքնորոշման, նրանց ազատ ու անխոչընդոտ զարգացման, նրանց ներքին բոլոր ուժերի և կարողութիւնների գործադրման և, վերջապէս, ճնշիչների և նեղիչների լծից նրանց լիակատար ազատագրման գաղափարները ոչ միայն առաջինն էին, որ Ամերիկայից մեզ հասան, այլ Ամերիկան առաջինն էր, որ կարողացաւ իրականացնել այդ վեհ գաղափարները մարդկային խեղդուած և թունաւորուած կեանքի մէջ, որպէս մի գեղեցիկ ու նախանձելի օրինակ իր ամբողջ մեծութեամբ ծառանալով աշխարհի առաջ:

Ահա այդ է պատճառը, որ հայ ժողովուրդն էլ այնպիսի խոր հաւատով ու բուռն համակրանքով է միշտ վերաբերուել ճնշուած ու բռնադատուած ազգերի այդ հեռաւոր բարեկամին, միշտ անտարակոյս համոզուած լինելով, որ կը գայ մի օր, երբ Ամերիկան իր ուժեղ ու փրկարար ձեռքը կը մեկնի և իրեն պաշտպանելու ու ազատագրելու բոլոր այն բարբարոս ուժերի իշխանութիւնից, որոնք այսօր ի վերջոյ կործանեցին հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական ամբողջ կացութիւնը, այժմ էլ մատնելով նրան սովի և համաճարակների դաժան քմահաճոյքին:

Եւ այն անժխտելի իրողութիւնը, որ այս պատերազմի և յեղափոխութեան ընթացքում միայն և միմիայն ամերիկական կոմիտէներն էին, որ Հայաստանի այս կամ այն մասերում կատարելով իրենց անաղմուկ, բայց մեծ գործը՝ որոշ չափով թեթեւացնում էին հայ ժողովրդին վիճակուած ճակատագրական զրկանքները, միշտ յոյս էր ներշնչում մեզ, որ եթէ մի օր գայ արդար հատուցման ժամը, գուցէ Ամերիկան պիտի լինի այն ազդու ուժը, որը իր միւս դաշնակիցների հետ միասին պիտի թեթեւացնի տարագրեալ և տառապական հայ ժողովրդի վիճակը, տալով նրան այն, ինչ դարերէ ի վեր եղել է նրա բոլոր քաղաքական ձգտումների ու ազատագրման երազների վերջնական նպատակը:

Եւ այն օրը, երբ արեւմուտքում դադարեց համաշխարհային արիւնահեղ պատերազմը ու Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ Վիլսոնը հանդէս եկաւ խաղաղութեան իր հռչակաւոր ծրագրով, որի մէջ հայկական հարցին տրուած է առաջնակարգ նշանակութիւն և որտեղ շեշտւում է պետական և քաղաքական ուժերի ներկայ դասաւորումի ու փոխ-յարաբերութիւնների փոփոխութիւնը, այն օրից հայ ժողովուրդն էլ աւելի հաւատով ու համակրանքով սկսեց վերաբերուել Հեռաւոր Ամերիկային, պարզ գիտակցելով, որ եթէ այդ ծրագիրն իսկապէս մի օր պիտի իրագործուի, այդ կը լինի Ամերիկայի և միւս դաշնակիցների ուժեղ և ազդու միջամտութեան շնորհիւ:

Եւ այսօր, երբ մենք արդէն տեսնում ենք այստեղ Ամերիկայի Միացեալ Նահանգների ներկայացուցիչներին, իսկ մօտիկ ապագայում կը տեսնենք նրանց և Հայաստանում, երբ նրանք ըստ կարելոյն և ըստ հնարաւորին արդէն սկսում են օգնութիւն հասցնել սովի և համաճարակի սարսափներին մատնուած հայ ժողովրդին՝ մեզ համար պարզ է, որ հայ ժողովրդի, հայ ազգի և աւերուած Հայաստան երկրի վաղեմի բարեկամները այս անգամ արդէն այլ ևս չեն թողնի մեզ գալիք օրերի նոր ճնշիչների քմահաճոյքին և ընդառաջ գնալով մեր ժողովրդի քաղաքական, բնական և արդարացի հակումներին ու ձգտումներին՝ մեզ հետ միասին ամեն կերպ կաջակցեն, որ մեր դատը, մեր կենսական շահերի պաշտպանութեան գործը դէթ այս անգամ դրուի հաստատուն և օրինական հողի վրայ, որպէսզի հայ ժողովուրդը ապագայում կարողանայ այլ ևս առանց օտարների օգնութեան ինքը տնօրինել իր կեանքը, կարգաւորել իր յարաբերութիւնները հարեւանների հետ, զարգացնել իր մէջ եղած բոլոր ուժերն ու կարողութիւնները համաձայն իր ազգային և պատմական առանձնայատկութիւնների:

պէս սոցիալ-դեմոկրատական, պէտք է ասել, որ նա տարաւ հազար ձայն աւելի, քան նա տարել էր Ռուսաստանի Սահմանադիր ժողովի ընտրութիւններին, չնայած նրան, որ շատ բանուորներ աշխատանքի բացակայութեան պատճառով Թիֆլիսից հեռացել են: Այսպէս, դեմոկրատիան չի կորցրել իր եռանդը, նրան չի տիրել անտարբերութիւնը, նա բարեխղճօրէն կատարում է իր պարտականութիւնը դէպի քաղաքային ինքնավարութիւնը: Անվհատաբար կանգնած է նա իր դիրքի գծի վրայ և իր կացութիւնն է պաշտպանում:

Այս միացեալ ուժը իր քաղաքացիական պարտաւորութեան գիտակցութեամբ գրաւական է մեր մայր քաղաքի և նրա առաջադիմութեան գրաւական: Ոչ ազգային դեմոկրատները, ոչ էլ բաժանեալ սոցիալ-դեմոկրատների խմբակը չկարողացաւ մեր դիրքին վնաս տալ: Դեմոկրատիան չի երերում ճահճային եղեգնի պէս. նա կանգնած է կաղնու պէս հաստատ և յամառ.

Դաշնակցական քամին նրան գծից չի հանի, ոչ էս-էրների ճիչն ու աղաղակը չի կանգնեցնի նըրանց ողորմած ձեռքը. նա էր և կը մնայ քաղաքի ղեկավար: Նա էր և կը մնայ իբրև ազատութեան անքակտելի ամրութիւն:

Ի վերջոյ չի կարելի չմատնանշել, որ Դաշնակցութեան բոյկոտի պատճառով քաղաքի հայ ազգաբնակութեան մի նշանաւոր մասը չի ունենայ իր ներկայացուցիչը քաղաքային ինքնավարութեան մէջ: Բայց միևնոյն ժամանակ պիտի հաղորդենք, որ ընտրողական տուփերի մօտ գալիս էին շատ հայեր, ռուսներ և մահմեդականներ: Գալիս էին քուէի տուփերի մօտ առանձնապէս աշխատաւոր դասակարգին, բանուորների թաղերից իրենց դասակարգային մարտիկների հետ միասին յայտնելու իր կարծիքներն ու ցանկութիւնները քաղաքային ընտրութիւններում»:

Թերթը համեստաբար լռութեան է տալիս, թէ արդեօք այդ հայ և ռուս բանուորներին ձայները ստացե՞լ է ինքը Վրաստանի սոցիալ-դեմոկրատիան, որ իրեն անուանում է և բանուորական, և միջազգային, թէ՞ այդ քուէները եղել են նրա դէմ:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍԿԱՆԴԻՆԱՒԻԱՅԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ

ԹԷՈԴՈՍԻԱ. Անգլիական ռադիօն հաղորդում է.—Սկանդինաւեան պետութիւնները յայտնեցին, որ Ֆինլանդիան ամեն կերպ կաջակցի բոլշեւիկների դէմ կռուելու:

ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՓՈՂԵՐԸ

ՕԴԵՍՍԱ.—Ռոմանովեան դրամները, վերջին օրերս, նորից թանկացան: Մասնաւոր բիրժաներում վճարում էին՝ 500 ռուբլիանոցին 640 ռ. հարիւրանոցին մինչև 130 ռ., իսկ մանրին 16 տոկոս յաւելումով:

ՍՈՎԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

Կ. Պոլսի թերթերը հաղորդում են, որ Կ. Պոլսում և ընդհանրապէս ամբողջ Տաճկաստանում տիրում է սով:

ՄԵԾ ԻՇԽԱՆԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Եալթայից եկող անգլիական ականակիր նաւի մէջ մտան «Այ-Տոդոր» կալուածքում բնակուող մեծ իշխան Ալեքսանդր Միխայլովիչը իր ամուսնուհու և գեներալ-մայոր Օրլովի: Ականակիրը գնաց անյայտ ուղղութեամբ:

ՊԱՐԷՆԱՒՈՐՄԱՆ ՄԵԾ ՊԱՇԱՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Ցեյլոնը լցուած է թէյի, բրդի և բրնձի բեռներով: Պարէնաւորման միլիոն բեռներով լցուած են նոյնպէս Շանհայն և Վլադիվոստոկը: Այդ բոլոր բարիքը ուղարկուելու են հարաւային Ռուսաստանին:

Ռուսաստանում գտնուող օտար երկրացի մեծ դրամատէրեր սպասում են գործ գործադրութեան համար:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԶՕՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆԸ ՍՏԱՒՐՈՊՈԼՈՒՄ

Վերջնականապէս որոշուած է հարաւային Ռուսաստանի զօրքերի հրամանատարութեան կայանը Եկատերինոդարից տեղափոխել Ստաւրոպոլ:

ԿՈԳԱՆ ԲՐՈՆՇՏԷՅՆԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԻՑ

Սահմանադիր Ժողովի անդամ Կոգան Բրոնշտէյնը լրտեսութեան մէջ մեղադրուելու պատճառով սպանուած է բոլշեւիկներից:

ԳԵՆ. ԻՒԱՆՈՎԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Գեներալ Ի. Ի. Իւանովը հրաժարուեց Դոնի հարաւային զօրքերի ճակատի հրամանատարութիւնից:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱԽԱԼՑԽԱՅԻ ԳԱՒԱՌՈՒՄ

Զինուորական նախարար գեներալ Մազնիեւը հաղորդում է հետեւեալ հաղորդումները.—«Այսօր, փետրուարի 5-ին, սկըսեցի ընդհանուր յարձակումը և 16-րդ ժամին մաքրեցի բանդաներից հետեւեալ գիւղերը՝ Զխալթէ, Պարցխա և Ձխեւլի: Վաղը գործողութիւնները կը շարունակեմ:

ՍԱԶՈՆՈՎԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Արտաքին գործերի նախկին մինիստր Սազոնովը Կ. Պոլսից անցնելիս յայտնել է «Մորնինգ Պոստ» թերթի աշխատակցին հետեւեալը.—«Ապագայ Ռուսաստանի մասին ես ունեմ իմ որոշ հայեցակէտը, իսկ ինչ վերաբերում է Հայաստանի վեց վիլայէթներից կազմուելուն, ինչպէս ես, այնպէս և Ռուսիայի շատ գործողներ, ողջունում են այդ ցանկութեանը, բայց մենք չենք կարող համաձայնել այն բանի հետ, որ Ռուսական Հայաստանի մասն էլ միանայ նրա հետ, որովհետեւ մենք ընդունում ենք Ռուսաստանի ամբողջութիւնը և անբաժանութիւնը:

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Թիֆլիսից Երեւան և Կարս ուղեւորուեց տրանսպորտ գնացք, որով մեկնեց տեխնիքական յանձնաժողով՝ երկաթուղու փըչացած մասերը վերաշինելու, գիծը դիտելու և երկաթուղային կանոնաւոր հաղորդակցութիւն հաստատելու նպատակով: Յանձնաժողովի անդամներն են՝ ինժեներներ՝ Մ. Յովհաննիսեան, Վ. Թարխանեան, Ա. Պճիկեան, Գ. Ա. Խասխեան, Հ. Մաղաքեան և երեք անգլիական ինժեներներ: Վերոյիշեալ հայ ինժեներները Հայաստանի կառավարութեան կողմից հրաւիրուած են երկաթուղային վարչութեան մէջ պատասխանատու պաշտօններով:

ԳԵՆ. ՌՒՕԿԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԿԱՐՍ

Թիֆլիսից Կարս մեկնեց Անգլիական կովկասեան բանակի գլխաւոր հրամանատար գեն. Ա. Ռուօկեր:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՊՈՒՐԻՇԿԵՒԻՉԻ ՆԱՄԱԿԸ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ

«Н. Д.» թերթի մէջ տպագրուած է Պուրիշկեւիչի բաց նամակը Ռումինիայի թագաւորին: Հեղինակը դատապարտում է այն ռենեգատ դաւաճաններին, որոնք իրենց շահերը պաշտպանելու համար յանձնեցին Եասսում, թագաւորի հօրը, 27 մարտի 1918 թ. այն արձանագրութիւնը, որով Բեսարաբիան միացւում է Ռումինիայի հետ: Ովքեր են այդ ռենեգատները: Պուրիշկեւիչը թւում է այդ անունները ի յիշատակ յետնորդների:

1) Դիմիտրի Նիկոլայեւիչ Սեմիգրադով, 2) Վլադիմիր Գրիգորեւիչ Կրիստի, 3) Միխայլ Իւանովիչ Կատրաժի, 4) Պաւել Իւրեւիչ Գորէ, 5) Նիկոլայ Իլիչ Բատեղատ: Բոլոր հինգ հոգին էլ Բեսարաբիայի նահանգի խոշոր հողատէրեր են և կալուածներ զանազան տիտղոսների և աստիճանի շքանշանների:

Թագաւոր, ասում է Պուրիշկեւիչը իր նամակում, մի մոռանաք, որ Ռուսաստանը ջախջախուած չէ պատերազմի դաշտում և թէ չկայ մի ժողովուրդ, որ նրա յաղթողը կոչուի: Նա ինքը ձգեց իրեն անօգնականութեան մէջ, որը արդիւնք է կեղտոտ, սնոտի ուսման հասունքի, որը զօրացրում ձգեց բանակի մէջ: 70 թուի յաղթուած Ֆրանսիան չներեց Գերմանիային Էլզաս-Լոտարինգիայի համար և այսօր մենք տեսնում ենք թէ ինչ վախճան է սպասում Գերմանիային վճռահատութեան ժամին: Կը ներէ՞ արդեօք անյաղթ Ռուսաստանը և նրա զաւակները իր դաշնակից փոքրիկ Ռումինիայի այն ձգտմանը, որով ուզում է Բեսարաբիան միացնել իր երկրին, այն երկիրը, որը կազմում է մեր վաղեմի բնակավայրը և որը չէ խըլուած մեզանից զէնքի ուժով այլ մի խումբ հերձուածող ազնուականների ձեռքով և ռումինական լէյերի զրնգոցով:

Երբեք, ձերդ մեծութիւն, հաւատացէք ինձ, երբեք, երբեք...

«Ժողովրդի Ձայն»-ի խմբագրութիւնը շնորհակալութեամբ ընդունում է ձրի կամ վարձատրութեամբ Բագուի, Ռուսաստանի, Հիւսիսային Կովկասի և Արտասահմանի թերթեր:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ՏԱՃԻԿՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՕՐՕՔ

Ռուսական բոլշեւիկեան յեղաշրջման ալիքները տարածուեցան նաև Պարսկաստանում ու մասամբ գործեցին պարսկա-տաճկական սահմանագծի զօրաշարքերի մէջ: Ռուսական ծով ուժը սկսեց յանկարծ իր ամենակործան տեղատուութիւնը: Այդ 1917 թ. դեկտեմբերին էր: Մի խելագար թափով ռուս քաջարի զօրքը՝ բռնուած բոլշեւիզմով՝ թափւում էր Թաւրիզի երկաթուղու կայարանը և քաղաքը՝ օր առաջ տուն հասնելու՝ թողնելով ճակատում միլիոնների հարստութիւն, թափելով ճանապարհներին անգին պաշար և ռազմամթերք և կամ չնչին արժէքով վաճառելով այն Թաւրիզում՝ արժանանալով թուրք մասսայի ծաղր ու ծանակին, արհամարհանքին: Կոզակի ձին կամ մի հրացանը փոխանակւում էր մի շիշ օղիով կամ մի քանի ղրանով: Ռուս զինուորութիւնը ծաղրի էր ենթարկւում, մանաւանդ երբ վերջին էշելոններն էին գնում:

Ռուս զօրքի հեռանալուց յետոյ Թաւրիզի Շարաֆխանէի, Ուրմիայ, Հէյդարաբադի, Սալմաստի, Խոյի զինապահեստները ենթարկւում են թալան-թալանի, վաճառման, հայ զինուորական ապաշնորհ միութիւնը պահել չկարողացաւ իր խնամքին յանձնուած յիշեալ հարստութիւնը և օր առաջ շտապից անցնել Արաքսի այն կողմը՝ երես տալով այսպիսով թէ տեղական և թէ այդ կողմերում վխտացող կովկասցի թուրք աւազակախմբերին: Հայը ամեն տեղ որսւում էր. շրջակայքից շտապեցին քաղաք, ուշացողները տուժեցին իրենց կեանքով: Այսպէս օրինակ՝ Շարաֆխանէում անգթօրէն խողխողուեց երեք հայ երիտասարդներ—Ար. Միրզաջանեան, Ռ. Յարութիւնեան և Ս. Տէր-Մարտիրոսեան: Նոյն վիճակին ենթարկուեցին նաև մի քանի առեւտրական հայեր Դիզախալիլ թուրք գիւղի մօտ: Թաւրիզից հայը չէր կարող ոտքը դուրս դնել: Կամաց-կամաց Թաւրիզի հայը սկսեց մտածել ինքնապաշտպանութեան մասին:

Կտրուեցինք դրսի աշխարհից.—երկաթուղային, պոստային և հեռագրական հաղորդակցութիւնը ընդհատուեցին ամենայն ուղղութեամբ: Երբեմն հաս ու կտոր տեղեկութիւն էինք լսում հայ-թուրքական ընդհարումների, տաճիկների շարժման, Ուրմիայի և Սալմաստի շըրջանների կռիւների, ընդհանուր գաղթի, անգլիացիների յառաջխաղացութեան, արեւմտեան ճակատում տեղի ունեցող առաջ ու դարձի և վերջերս էլ Կովկասեան հանրապետութիւնների և այլ լուրերի մասին:

Ահա երկար այսպիսի դրութեան ժամանակ էր, երբ մայիսի 25-ին, երեկոյեան, առաջին անգամ Թաւրիզ մտան 34 հոգի տաճիկ ասկեարներ: Այս լուրը կայծակի արագութեամբ տարածուեց հայերի մէջ. սարսափը ընդհանուր էր հայերի՝ և հրճուանքը պարսիկների համար: Ընդհանուր հասարակական ժողով գումարուեց, ուր որոշուեց արգելել ընդհանուր և մասնակի գաղթը,—ապրել միասին եւ մեռնել միասին նշանաբանով: Կոչ հրատարակուեց այդ ուղղութեամբ: Բայց այնուամենայնիւ գտնուեցան վատեր, որոնք գաղտագողի, գիշերանց փախան քաղաքից և կամ թագնուեցան ծանօթ պարսիկների տներում: Մի խումբ վաճառականների, որոնք արդարև վտանգուած էին տաճիկ կառավարութեան կողմից, իրաւունք տրուեց գաղթելու դէպի Թեհրան:

Մայիսի 28-ին հեռացան Թաւրիզից բոլոր հիւպատոսները—անգլիական, ֆրանսիական և ամերիկական—իրենց կազմով և հպատակներով — բացի ռուսականից: Մայիսի 29-ին ռուս ծառայողների մի մեծ խումբ՝ բաղկացած մօտ 300 հոգուց (որի մէջ և մի քանի հայ ընտանիքներ) ճանապարհուեց դէպի Բագու Արդաբիլ—Աստարա գծով, սակայն այդ խումբը տեղ չհասած՝ կողոպտւում է գլխովին Արդաբիլի և Աստարայի միջև շահսեւաններից: Թեհրանի դեսպանների կարգադրութեամբ հիմնւում է Թաւրիզում իտալօ-հոլանդական հիւպատոսարան՝ թափուր հիւպատոսարանների, այլ և քրիստոնեայ ազգաբնակութեան կեանքը և գոյքը պաշտպանելու համար, գլխաւորութեամբ կաթոլիկ միսիայի անդամ Հ. Ֆրանսէնի, որի մատուցած ծառայութիւնները հայ ժողովրդին—կոտորածից և այլ պատուհասներից ազատելու նրան—անգնահատելի են: Հայերից շատերը իրենց թանկարժէք իրերը կապկըպում և պահ են տալիս իտալօ-հոլանդական հիւպատոսարանին, իսկ մի մասն էլ—ծանօթ պարսիկներին:

Տաճիկ քաղցած զօրքը հետզհետէ լցւում է քաղաք ո՛չ թէ ռազմագիտական, այլ աւելի շուտ՝ շրջակայքում քաղցից չմեռնելու համար. երկու ամսուայ ընթացքում կուտակւում են Թաւրիզում և շրջակայքում մօտ 20,000 զօրք: Ինչ ասել կուզի՝ որ կենսական մթերքները զգալի կերպով սկսում են թանգանալ և պակասել: Առեւտրական կեանքը, որ 7—8 ամիս կանգ էր առած՝ տաճիկների գալով բոլորովին մեռնում է:

Հայերի հետ շատ քաղաքավարի էին վարւում ընդհանրապէս, բայց անխուսափելի էին բացառութիւնները: Տեղացի պարսիկները, որ սկզբում գրկաբաց էին ընդունել նրանց և յաճախ միտինգներ ու համախմբական ժողովներ էին ունեցել միասին, մի երկու ամսից յետոյ սկսում են խիստ զզուել իրարից,—պատճառը տաճիկների ալան-թալանի քաղաքականութիւնն էր: Այժմ պարսիկները հազար երանի էին տալիս անօրէն ռուսին:

Հայերի տնտեսական դրութիւնը, գնալով աւելի վատանում էր. դրան մեծ զարկ տուեց յունիսի 6-ի հրամանը, որը Լիլաւա թաղում տասնեակ տներ քանդեց՝ փլատակների տակ թողնելով տնային իրեր,

ეროვნული ბიბლიოთეკა

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՎՐԱՑ ՀԵՌԱԳՐԱԿ. ԳՈՐԾ.)

—oo—

ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Սպարտակեանները նահանջում են

ՆԱՈՒԷՆ, 5 փետրուարի.—Համբուրգի օխրանայի զօրախմբի 1,500 մարդ չկարողացան դուրս գալ Բրեմենից սպարտակեաններին պաշտպանելու համար, որովհետև երկաթուղու շարժումը բոլորովին դադարած էր:

ԿԱՐՆԱՐՖՈՆ, 5 փետր.—Կոպենհագենից հաղորդում են. Փետր. 4-ին Բրեմենում կռիւը դադարեց և սկսուեց հաշտութեան բանակցութիւնը: Երեկոյեան բանակցութիւնները ընդհատուեցան: Կառավարական զօրքերը հրաման ստացան վերցնել քաղաքը: Զինուած Էյզենախի և Գոտայի սպարտակեանները գնում են դէպի Բրեմեն օգնութեան:

Բեռլինից հաղորդում են, որ կառավարական զօրքերը գրաւեցին Բրեմենի բատուշան և մասամբ հասարակական շինութիւնները: Սպարտակեանները նահանջում են:

Բանւորական խորհուրդների ճանաչումը կոնստիտուցիայի մէջ

ՆԱՈՒԷՆ.—Գերմանական բանւորների և զինւորների դեպուտատների կենտրոնական խորհուրդը դիմեց ազգային ժողովին խնդրելով, ճանաչել բանւորների և զինւորների խորհուրդներին ապագայ կոնստիտուցիայի մէջ: Յայտարարութեան մէջ մատնանշւում է թէ ազգային խորհրդի խնդիրը պէտք է լինի Գերմանիան վերաստեղծելու քաղաքական և տնտեսական կողմից և նրա տերրիտորիալ նոր բաժանումը: Ուղերձը վերջանում է յայտարարութեամբ, թէ կենտրոնական խորհուրդը կը յանձնի ազգային խորհրդին այն իշխանութիւնը, որպիսին ստացել է խորհուրդների ժողովից:

Թեմզայի բանւորների գործադուլը

ԲԵՐԼԻՆ, 3 փետր.—Ամստերդամից հաղորդում են, թէ Թեմզայի բերաններում գործադուլ են արել 10,000 նաւային բանւորներ: 4,000 Մանչեստրի նաւաշինային բանւորներ նոյնպէս գործադուլ յայտարարեցին:

Արաբիայի եւ Հայաստանի անկախութիւնը ճանաչուած

ԽԱՐԿՈՎ, 5 փետր.—Օդեսայում կ, Պոլսից հաղորդում են, թէ Համաձայնութեան կողմից ճանաչուած են Արաբիայի և Հայաստանի անկախութիւնը: Համաձայն Համաձայնութեան պետութիւնների պնդման, Հայաստանի ռուսական մասը, որ առաջուց անջատուել էր Տաճկաստանից, նոյնպէս միանում է նրան:

Բուրժուական լրագիրների փակումը

ԲՐԵՄԵՆ, 5 փետ.—«Կոմունիստ» թերթը հաղորդում է, որ Դիւսելդորֆում փակուած են բոլոր բուրժուական թերթերը: Սպասում են անգլիական զօրքերի կարգը վերականգնելու համար:

Իսպանական դելեգացիայի արգելումը

ԲԵՐԼԻՆ, 3 փետր.: Բեռնից հաղորդում են, որ ֆրանսիական կառավարութիւնը մերժեց իսպանական դելեգացիային անցնել Բեռնի սոցիալական կոնֆերենցիան: Դելեգացիայի կազմի մէջ մտնում են Ձարրը ու Ռիբէյրը: Դելեգացիան բռնուած է ֆրանս-իսպանական սահմանում:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Չեխօ-սլովակների պահանջը

Չեխօ-սլովակների պատգամաւորները Կրամարժը և Բենիսը չորեքշաբթի օրը ներկայացրին իրենց պահանջները Դաշնակից պետութիւնների մասնաժողովի առաջ: Պատգամաւորները պահանջում են, 1) որ նոր հանրապետութեան սահմանների մէջ մտնեն Բոգեմիան, Մորավիան, Սիլեզիան, Սլովակիան, վենգերական ռուսիններով բնակուած մասերը, Գլացերը, Դեմալիբորը, և վերջապէս այն շրջանները… (խեղաթիւրուած է)…որոնք բոլորն էլ բնակեցուած են Չեխօ-սլովակներով 2) որ որոշուի ընդհանուր սահմանագիծը չեխօ-սլովակների և հարաւսլաւոնների միջև, 3) որ Էլբա, Դունայ և Վիսլա մեծ գետերը, նոյնպէս և Տրիեստ-Պրեսբուրգ, Պրեսբուրգ-Ֆիումէ, Պրագա-Էրֆուրտ, Նիւրնբերգ-Ստրասբուրգ երկաթուղիները միջազգայնացրած լինեն, 4) որ Վիեննայի չեխ ազգաբնակութիւնը և Սակսոնիայի սերբ ազգաբնակութեան պրոբլեմները իրենց լուծումը ստանան համաձայն Դաշնակից պետութիւնների գաղափարների:

ՔՐՈՆԻԿՈՆ

Սահմանադիր ժողովի ընտրութիւնների շուրջը.—Վրաստանի սահմանադիր ժողովի ընտրական կենտրոնական յանձնաժողովը իր վերջին նիստում որոշել է լուրջ ուշադրութիւն դարձնել բոլոր հնարաւոր պակասութիւնները վերացնելու և ուղղել ցուցակները, ընտրողների ազգանունները:

◆ **Նահանգական վարչութիւնների լիկւիդացիայի շուրջը.**—Յատուկ մի վարչական յանձնաժողովը, որ կազմուած է Ներքին գործերի մինիստրութեան կից, իր վերջին նիստում մատնանշեց այն հիմնարկութիւնները, որ պէտք է յանձնուի նահանգական վարչութիւնից գործերը, վիճակագրական աշխատանքները և այլն: Յանձնաժողովը որոշեց նահանգական վարչութիւններին կից կազմել լիկւիդացիոն յանձնաժողով, որի մէջ կը մտնեն ինժեներներ, բժիշկներ և Ներքին գործերի մինիստրի լիազօրը:

◆ **Գութան Գերմանիայից.**—Երկրագործութեան մինիստրութիւնը Վրաստանի համար Գերմանիայում գնել է 1,100 գութան, որ բաժանուելու է գաւառական զեմստուոներին ազգաբնակութեանը ծախելու համար:

◆ **Նաւթ Թիֆլիսի համար.**—Բաքուից կենտրոնական պարենաւորման խորհրդի հասցէով ուղարկուել է 50 վագոն նաւթ:

◆ **Ոջլի դէմ.**—Թիֆլիսի քաղաքային սանիտարական տեսուչը քաղաքային վարչութիւնից խնդրել է յատուկ մարդ ուղարկել Բաքու, Թիֆլիսի համար միջատասպան դեղ գնելու նպատակով: Այդ դեղը մեծ չափով կօժանդակէ բծաւոր տիֆի դէմ մաքառելու գործին:

◆ **Հրաժարական ազգայնացման պատճառով.**—Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան ազգայնացման պատճառով քաղաքային բժշկա-սանիտարական մասի տեսուչ բժ. Ս. Իգիթխանը հրաժարական է տուել: Վրաց բժիշկների միութեան առաջարկով նրան ժամանակաւորապէս փոխարինելու է բժ. Միքելաձէն:

◆ **Պոստ-հեռագրական անգործ ծառայողների ցուցակագրութիւն.**—Ռուսաց Ազգային Խորհրդի պոստ-հեռագրական յանձնաժողովն սկսել է ցուցակագրել Անդրկովկասեան պոստ-հեռագրական անգործ մնացած ծառայողներին:

◆ **Խոշոր գողութիւն.**—Լոյս փետրուարի գիշերը մի քանի անյայտ չարագործներ սպառողական № 2 խանութից (Միքայելեան փող. № 159) գողացել են զանազան ապրանք [illegible]0,000 ռ. արժողութեամբ:

հաց, ցորեն և այլն. Վնասը հասնում է մօտ 300,000 թումանի:

Յունիսի սկզբներին Սալմաստը պաշարւում է տաճկական զօրքով, երեք օրեայ կռուից յետոյ 'ազգաբնակչութիւնը փախչում է Ուրմիա: Այդ այն ժամանակ էր, երբ Անդրանիկը 2000 հոգով Ջուլֆայով անցնում է Խոյ՝ Սալմաստին օգնութեան, բայց անյաջողութեան հանդիպելով վերադառնում է: Ալի-Իհսան փաշան, չկարողանալով իր վրէժը Անդրանիկից առնել, հրամայում է Խոյի և Մաքուի հայերին կոտորել: Յիշեալ փաշան նոյն դիւային ծրագրով շտապում է Թաւրիզ—բնաջնջելու Թաւրիզի հայութիւնը: Սարսափը աւելի ևս տիրեց Թաւրիզի հայերին, երբ փաշան դեռ քաղաք չհասած՝ հրամայեց տասը հոգի պատանդ վերցնել աչքի ընկնող հայերից: Այդ օրը յունիսի 27-ն էր, գշ. օր. Ատրպատականի Թեմակալ առաջնորդ Ներսէս եպ. Մելիք-Թանգեանը, սպանական հիւպատոս հայր Ֆրանսէնի ՚աղաչանք-պաղատանքը՚ վերցնելու պատանդների խնդիրը—անօգուտ անցաւ. փաշայի հրամանը խիստ էր և անողոք: Ինչպէս կարելի էր չկատարել. աւելի լաւ էր տասը հոգի կորցնել, քան Թաւրիզի 4000 հայութիւնը: Առաջնորդը Պարսկաստանում համարւում է հայ ժողովրդի ներկայացուցիչ. նրանից էր պահանջւում տասը պատանդները, նա էր պատասխանատուն. կրիտիքական էր նրա դրութիւնը: Այդ խնդրի առթիւ ժողով էր նշանակուած առաջնորդարանում. շատ քչերն էին ժողովի եկել, մի քանիսն էլ թաքնուել էին Թուրքերի ահերում: Ժողովրդի անունից մեծ-մեծ խօսողները և առաջնորդարանի անբաժան անդամները չքացել էին: Ժողովը տևեց մինչև ուշ գիշեր թէր և դէմ կարծիքներ եղան պատանդներ տալու և չտալու մասին, ի վերջոյ որոշուեց՝ փաշայի հրամանը կատարել —ընդունել երկու չարիքից փոքրագոյնը: Պատանդ գնացողը պէտք է իր կեանքին հետ բարով անէր, և այդ էր պատճառը, որ ութ ժամ շարունակ խօսում-վիճում էին և ոչ ոք չէր յանդգնում իր համաձայնութիւնը տալու. ի վերջոյ յօժարակամ պատանդ գնալու առաջին համաձայնութիւն տուողը եղաւ Ալ. Տէր-Վարդանեանը, որից յետոյ և միւսները: Ահա այդ 10 հոգու անունները, որոնք յօժարակամ պատանդ գնալով թերևս ազատեցին Թաւրիզի 800 տուն հայութիւնը բնաջնջումից:

1) Ալ. Տէր-Վարդանեան.
2) Գր. Աղաջանեան.
3) Գ. Յակոբեան.
4) Մ. Պատմագրեան.
5) Պ. Միքայէլեան.
6) Դերձակ Պետրոս.
7) Յ. Օհանեան.
8) Մ. Արամեան.
9) Հ. Յովհաննիսեան.
10) Ս. Աֆթանդիլեան.

Մի օր յետոյ պատանդներին թուին աւելացաւ տաճկների պահանջմամբ երեք հոգի ևս.—Ալ. Տէր-Յակոբեան, Զ. Նազարբէկեան և Թ. Աֆթանդիլեան:

Պատանդներին տեղաւորեցին հայ թաղերից հեռու Մաքսուդիա թաղում, Կանլի մէչիդի յետևում գտնուող մի կիսաւերակ բնակարանում, պահապան նշանակելով մեզ վրայ տասը ասկեար և հինգ պարսիկ հրացանաւորներ ամենախիստ ռեժիմի տակ:

Հետևեալ օրը, յունիսի 28-ին Ալի-Իհսան փաշան ժամանեց Թաւրիզ: Հայերը դիմաւորեցին նրան մատաղով և աղ ու հացով:

Հայերին ուղղուած նրա առաջին խօսքն էր.—«Մի միլիոն հայ կոտորեցինք, մնաց միայն 50,000. դալը Անդրանիկը եկաւ Խոյ, Ջուլֆայից, փախաւ. հրամայեցի Խոյի հայերին կոտորել. Անդրանիկը կոտորեց Նախիջևանի թուրքերին, ես էլ հրամայեցի կոտորել Մակուի հայերին: Դուք էլ, եթէ անգլիացիների հետ որևէ կապ ունենաք, ձեզ էլ կոտորել կը տամ»:

Փաշայի սիրտը գութ գցելու համար՝ հայերը հրաւիրում են նրան առաջնորդարան թէյի, յաղթական կամար շինում և փողոցները զարդարում գորգերով. սակայն ինքը չէ գալիս, այլ ուղարկում է իր փոխարէն ադիւտանտին: Մի քանի օր մնալուց յետոյ հեռանում է փաշան քաղաքից գոհ հայերից, որից յետոյ ազատւում են նաև պատանդները՝ վեց օր մնալուց յետոյ:

Գր. Աղաջանեան

(Կը շարունակուի)

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱՅԻ ԱԿՈՒՄԲԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ

Կիրակի, փետրուարի 9-ին բացւում է Հ. Ժ. Կ. Աշակերտական Ֆրակցիայի ակումբը: Ակումբի բացման միտքը յղացել էր Աշակերտական ֆրակցիայի կազմակերպութեան սկզբի օրերից, բայց կատարուած քաղաքական տխուր դէպքերի պատճառով և մասնաւորապէս Թիֆլիսի աշակերտութեան ծանր դրութիւնը ի նկատի ունենալով, Աշակերտական ֆրակցեան հնարաւորութիւն չունէր իրագործելու իր միտքը:

Այժմ, երբ համաշխարհային պատերազմը վերջանում է և կեանքը հետզհետէ մտնում է նորմալ պայմանների մէջ, Աշակերտական ֆրակցիան՝ այժմ հնարաւոր և ժամանակին է գտնում ակումբի բացումը, նամանաւանդ որ մեր իրականութեան մէջ չկայ ոչ մի աշակերտական ակումբ:

Այսպէս ուրեմն բացւում է մեր ակումբը և ես սրտի անհուն ուրախութեամբ շնորհաւորում եմ ակումբի բացումը և իմ կողմից ուզում եմ ասել մի քանի խօսք այդ մասին:

Բացի այն, որ ակումբում մենք ի մօտոյ կը ծանօթանանք մեր կուսակցութեան հետ, կուսումնասիրենք նրա տակտիկան առանձին դասախօսութիւնների և ազատ զրոյցների միջոցով, ակումբում մենք կը ծանօթանանք ու կը մտերմանանք միմեանց հետ և ակումբում մենք կը մօտենանք մեր կեանքի ընդհանուր նպատակներին լուսաւորութեան, ինքնաճանաչութեան և ժողովրդականութեան:

Մեր ակումբը լինելու է մի փարոս և նրա լոյսի ոյժը կախուած է մեզանից և միայն մեզանից, և որպէսզի այդ լոյսը ապագայում էլ չհանգի, ես իմ կողմից պարտք եմ համարում մեր համակրող և գիտակից աշակերտութեան ուշադրութիւնը հրաւիրել դէպի ակումբը և իրենց եռանդուն աշխատանքով պահպանել ակումբը: Ես նոյնպէս դիմում եմ Կենտրոնական Կոմիտէի անդամներին և մեր մեծ եղբայրներին, ուսանողական ֆրակցիայի անդամներին և ակումբի գաղափարի բոլոր համակրողներին՝ օգնել մեզ իրենց բարի խորհուրդներով և ապահովել մեր ակումբը նիւթական միջոցներով:

Կորիւն Չիլինգարեան

ՎՐԱՍՏԱՆ

ՎՈՐՈՆՑՈՎԿԱ ԳԻՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ

Վրաստանի արտաքին գործերի և առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրները ստացել են Վորոնցովկա գիւղի բնակիչների մի խնդիրը, որի մէջ նրանք յիշելով, որ Վորոնցովկա գիւղը գտնւում է Վրաստանի և Հայաստանի հանրապետութիւնների միջև սահմանուած չէզոք գծի վրայ, իր վրայ էլ գործադրւում են այն օրէնքները և կարգադրութիւնները (գլխաւորապէս գիւղերը ապրանքներ ներմուծելու և նրանցից ապրանքներ արտահանելու նկատմամբ), որոնք գործադրւում են Վրաստանի կողմից իր հարևան պետութիւնների նկատմամբ: Ընդգծելով, որ Վորոնցովկան միշտ անմիջապէս կապուած է եղել Թիֆլիսի հետ, որ գիւղի բնակիչները իր բաղդը կապուած են համարում միայն Վրաստանի հետ և որ մինչև հայ-վրացական պատերազմը, Վորոնցովկայի բնակիչները համախոսական էին կազմել Վրաստանի սահմաններում մնալու ցանկութեամբ: Գիւղի ներկայացուցիչ լիազօր Ս. Կ. Ժուրով միջնորդում է, որ իրաւունք տրուի Թիֆլիսի հետ անմաքս ապրանք փոխանակութիւն կատարելու:

ՎՐԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

Վրաստանի կառավարութիւնը իր վերջին նիստում կայացրել է հետևեալ որոշումները.

— Պատերազմի կարիքների համար հանգանակուած բոլոր գումարները կենտրոնացնել պետական գանձարանում:

— Վրաստանի Սահմանադիր ժողովի կենտրոնական ընտրական յանձնաժողովին իրաւունք է տրւում ընտրութիւնները նշանակել երբ և որտեղ կամենայ:

— Սահմանադիր ժողովի ընտրութիւնները վերջանալուց յետոյ լուծուած համարել վրաց պարլամենտի լիազօրութիւնները:

— Վրաց պարլամենտի փետրուար ամսուայ օրապահիկը տալ ամսի սկզբից:

— Վերացւում են քաղաքացիական շքանշանները:

— Քութայիսում հիմնել գինապահեստ:

— Թիֆլիսի պոլիտեխնիկումին պետական նպաստ չտալ և այդ մասին յայտնել քաղաքային վարչութեանը:

ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

II

Մեր վերաբերմունքը, ինչպէս նկատել էինք անցեալ յօդուածում, յստակ է դէպի այն յեղաշրջումը, որ տեղի է ունեցել Թիւրքիայի կառավարութեան մէջ, մանաւանդ է, որ նա կատարուել է ոչ ինքնաբերաբար, այլ Դաշնակիցների յաղթութեան ճնշման ներքոյ:

Այդ փոփոխութիւնը պետութեան ներքին կեանքի վրայ, վարչական սիստեմի ու առհասարակ ռեժիմի վրայ, մենք ոչ մի հիմք չունենք սպասելու, որ ունենալու է այն բարերար ազդեցութիւն, որը ցանկալի էր: Միամտութիւն կը լինի կարծել, որ հպատակ քրիստոնեայ ազգութիւնների, մասնաւորապէս հայ ժողովրդի վիճակը դրանից կարող է իսկոյն և եթ թեթևանալ, որ Թիւրքիան ընդունակ կը լինի իր սեփական ոյժերով ու ինիցիատիւով իր երկրում, չեմ ասում դեմոկրատական կարգեր մտցնել, այլ գոնէ տարրական իրաւակարգ ստեղծել: Դրա համար հարկաւոր էր, որ նա միանգամայն ազատագրուէր բանակալ ռեժիմի կործանարար աւանդութիւններից, որոնք, ինչպէս ցոյց տուեց վերջին «սահմանադրական» տասնամեակը, շատ խորն են արմատացել Թիւրքիայի պետական շրջանակներում:

Այդ բոլորն ասելիս, ես նկատի ունէի գլխաւորապէս նրա ներքին քաղաքականութիւնը: Սակայն արտաքին քաղաքականութեան մէջ ևս Թիւրքիայի վարիչները մնացել են հաւատարիմ իրենց վաղեմի, աւանդական ուղղութեանը:

Յայտնի է, որ Համիդի դիւանագիտական շկօլան ճարպիկ կերպով օգտագործել է մեծ պետութիւնների մրցումը իր գահը և գոյութիւնը պահպանելու համար:

Յայտնի է և այն, որ այդ հակամարտութիւնների սպարեզում տուժող կողմը, քաւութեան նոխազը, միշտ էլ եղել է հայ ժողովուրդը: Եւ երբ պետութեան նախաձեռնութեամբ և խրախուսանքով կազմակերպուած ոճրագործութիւնների հանդէպ հայ ազգի բնաջնջման առիթով երբեմնակի լսւում էր արթնացող խղճի ձայնը, Թիւրքիայի դիւանագիտութիւնը «ձեռք ու ոտք էր ընկնում» հանգստացնելու նրան իր հազար ու մի վարչական [illegible] միջոցով: Իսկ այն դէպքում, երբ այդ չէր յաջողւում, նա դիմում էր այն թանգարժէք միջոցներին, որոնք արևելեան պետութիւնների դիւանագիտութեան առանձնայատուկ գիծն են կազմում և յատկապէս Համիդեան շրջանը հարստացրել են լեգենդային տեսակներով:

Միայն այդ ձևով, «խաղերով» եւրոպական դիւանագիտութեան ադիւը, «հիւանդ մարդը» կարողանում էր կանգուն մնալ այն սպառնալիքի առջև, որը ներկայացնում էր իրենից դուրս [illegible]: Այդ քաղաքականութեան հիմնադիրն ու վարիչը եղել է [illegible] Աբդուլ Համիդը, որ իր գահակալութեան ամբողջ ընթացքում եւրոպական դիւանագիտութիւնը բառիս բուն նշանակութեամբ խաղացրել է իր ձեռքում:

Համիդեան ռեժիմի այդ գործելակերպը այնուհետև շարունակել են անփոփոխ կերպով նրա «Սահմանադրական» յաջորդները—Իթթիհաթի կուսակցութիւնը թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան խնդիրներում:

Այսօր, չնայելով որ Իթթիհաթի ուժեղ ներկայացուցիչները՝ պահ մի չքացել են քաղաքական հորիզոնից, զիջելով իրենց թաղկաթոռները ուրիշներին, մենք դժուարանում ենք կարծելու, որ այդ կատարուած փոփոխութիւնը առերևոյթ չէ, սիմուլիացիա չէ յաղթողների աչքին թոզ փչելու համար: Ընդհակառակը, իթթիհատականները, հաւատարիմ իրենց աւանդական ուղղութեանը, լարում են իրենց բոլոր բարոյական և նիւթական ոյժերը ստեղծուած քաղաքական նոր սիտուացիան ևս իրենց օգտին թեքելու համար: Նրանք վճռել են լայն ագիտացիա մղել ոչ միայն տեղական մահմեդական տարրերի մէջ, այլ և Դաշնակիցների շրջանում՝ խաղաղութեան վեհաժողովում Թիւրքիայի համար նպաստաւոր տրամադրութիւն պատրաստելու նպատակով:

Այդ ուղղութեամբ նրանք նոր չէ որ գործում են ու պատրաստւում: Յատկապէս միևնոյն նպատակով, ինչպէս հաղորդում են մեզ արժանահաւատ աղբիւրից, նրանք ունեն իրենց տրամադրութեան ներքոյ 15 միլիոնի մի ֆոնդ: Նշանակալից է, որ այդ ֆոնդը, որի գլխաւոր նպատակն է՝ տապալել հայկական դատի յաջող լուծումը, կազմուել է զուտ հայկական միջոցներից:

Դեռ պատերազմի սկզբնական շրջանում Պոլսում յայտնի էր մի առևտրական ընկերութիւն «Բաքալ Ջէմիէթի» անունով, որը հիմնուած էր իթթիհաթականների ջանքերով: Այնքան անտանելի դարձաւ այդ ընկերութեան կատարած զեղծումները և խարդախութիւնները, որ շարունակել իրենց գործունէութիւնը այդ անուան տակ այլ ևս անհնարին եղաւ, և նրա հիմնադիրները ստիպուած եղան հանդէս գալ գործելու ուրիշ, բայց աւելի մեծադղորդ, անունով—«Իսլամ Ջէմիէթի»:

Սակայն, ինչ տեսակ գործունէութիւն էր դա: Այդ գործի վարիչները Թալէաթի ու Էնվերի հովանաւորութեամբ մենաշնորհ էին ստացել, իբր թէ պետական կարիքների համար, գրաւելու ապրանքներն ու մթերքները: Եւ ահա «օրինական թոյլտուութեամբ» նրանք աջ ու ձախ գրաւում էին քրիստոնեայ հպատակներից ու առևտրականներից, բայց, ի հարկէ, գլխաւորապէս հայերից, նրանց ունեցած բոլոր ապրանքներն ու հարստութիւնները թէ Պոլսի մէջ, թէ Պոլսից դուրս—գաւառներում, մթերքների ռեկվիզիցիայի անուան տակ: Այդ ձևով նրանք խլել են ահագին քանակութեամբ պարեններ, դրամներ, ոսկիներ ու ոսկեղէններ, հագուստներ ու կտորեղէններ, և այդ ամենը վաճառքի հանել տասնապատիկ գներով մասնաւոր սպեկուլեանտներին, իսկ այս վերջիններիս միջոցով պետութեանը:

Խոշոր գումարներ են վաստակել այդ ձևով ոչ միայն ինքը ընկերութիւնը և նրա վարիչները, այլև Իթթիհաթ կուսակցութիւնը: Վերջինիս սնտուկը էլ աւելի է հարստացել շնորհիւ Անդրկովկասեան արշաւանքի: Ռուսական ճակատում թողնուած հսկայական հարստութիւնից մի մասն է միայն բաժին ընկել թիւրք պետութեանը, խոշորագոյն մասը այս կամ այն թիւրք փաշայի իթթիհատական գործակալի ձեռքում դարձել է հարստանալու աղբիւր:

Ադրբէջանի թիւրքերի դրամական կամաւոր նուիրաբերութիւնները և Բաքուի հայ ազգաբնակութիւնից խլուած ոսկեղէն ու դրամական հարուստ աւարի «չաղ» պատառը նոյնպէս ծառայել են Իթթիհաթի «քօղարկուած» նպատակներին, որոնցից ամենախոշորը և ամենից հերթականը նախատեսնուած է եղել դեռ ևս պատերազմի սկզբնական շրջանում, ու

20215

քայլ առ քայլ ի կատար է ածում յետագայում հայերի ինչքերն ու հաստատութիւնները բռնագրաւելով, տեղահանութեամբ և բնաջնջումով:

Ցաւալի է այդ աղբիւրներից է գոյացել այն 15 միլիոն ֆոնդը, որ, ինչպէս վերն ասացի, պէտք է գործադրուի հայութեան արդար պահանջները խեղդելու և Թիւրքիայի ջլատման առաջն առնելու նպատակով:

Թիւրքիայի կառավարական շրջանում կատարուած վերջին փոփոխութիւնն էլ հազիւ թէ կարող է առանձին վստահութիւն ներշնչել մեզ, թէ այդ պետութեան արտաքին քաղաքական տրադիցիաները և վարչական ներքին ռեժիմը նոյնպէս փոխուելու են դէպի օրինականը և կուլտուրականը: Հայ տարագրեալներն ու բռնադատեալները վերադարձուած են իրենց օջախները, տեղահանութեան ու ջարդերի հեղինակները կրե՞լ են իրենց պատիժը, պետութեան ոճրագործ պաշտօնեաները հեռացուած են իրենց պաշտօններից ու կալանաւորուած, ժողովրդի դէմ ուղղուած էկսցեսներին վերջ են տրուած, մահմեդականացուած հայ կանայք ու որբերը ազատագրուած են արդեօք և այլն:

Ահա մի շարք հարցեր, որոնց լուծումը պէտք է տեղի ունենար անյապաղ անկեղծօրէն ու պետականօրէն գործող մինիստրութեան կողմից, եթէ նա իրօք վճռել է ընդմիշտ հրաժարուել աւանտիւրաների քաղաքականութիւնից:

Այդ հարցերը մնացել են անլուծելի, թէև պարլամենտում դեռ ևս շարունակում են խօսել այդ մասին:

Մեր բոլոր ջանքերը, պէտք է ուղղուած լինեն մի բանի, որ Թիւրքիան հանդէս գայ իր քաղաքական բոլոր քայլերի մէջ առանց դիմակի, առանց ինտրիգների ու սիմուլեացիայի: Եւ եթէ նա այդ անկեղծութիւնը երևան չի հանի, մեր պարտքը պիտի լինի համապատասխան նախազգուշական միջոցները ձեռք առնել՝ դիմադրելու նրան և չէզոքացնելու նրա այն բոլոր քայլերը, որոնք ուղղուած կը լինեն հայութեան շահերի դէմ:

Հետևենք ուշի ուշով, որպէսզի Բոսֆորի դիւանագէտների ճկուն խաղերից յանկարծակիի չգայ հայ ժողովուրդը ու տանուլ տայ իր արդար դատը:

Աշխատակից

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՀԱՅ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Վրաստանի անկախութիւնը հրատարակելու օրից վրաց կառավարութիւնը զանազան ժամանակ կրճատել է նախկին Անդրկովկասեան երկաթուղիների ծառայողների շտատը, պատճառաբանելով այդ նրանով, որ Վրաստանին բաժին ընկած երկաթուղիների գիծը յիշեալ ընդհանուր գծի միայն մի մասն է կազմում:

Ծառայողների առաջին կրճատումը տեղի ունեցաւ անցեալ տարուայ յուլիս ամսին, երբ մի քանի հազար ծառայողներ փողոց շպրտուեցին: Երկրորդ կրճատումը տեղի ունեցաւ սեպտեմբեր ամսին:

Այս երկու կրճատումների ժամանակ, չնայելով այն հանգամանքին, որ վրացի ծառայողները երկաթուղու վրայ դեռ ևս ռուսական կառավարութեան օրով կիսից աւելին էին կազմում, վրացական «դեմոկրատիկ» հանրապետութեան օրով արտաքսուելու բնազդին արժանացան համեմատաբար փոքրամասնութիւն կազմող հայերն ու ռուսները: Ճիշտ է, կային նրանց մէջ վրացիներ էլ, սակայն նրանք յետոյ նորից ընդունուեցին ծառայութեան, այնպէս որ նրանց հեռացնելը հասարակութեան աչքին հող ու մոխիր փչելու նպատակով էր տեղի ունեցել:

Որովհետև ռուսական օրէնքների համաձայն այս ահագին բազմութեանը հարկաւոր էր վարձատրել, առնուազը տալով մի տարուայ թոշակը, ուստի վրաց «դեմոկրատիկ» հանրապետութիւնը չկամենալով մեծ ծախսի տակ ընկնել, յունիսի 5-ին նոր օրէնք հրատարակեց, որով կիսով չափ նա պակասում էր ծախսերից: Բացի դրանից ծառայողների ռոճկից՝ կենսաթոշակ տալու համար՝ պահուած դրամներից վրաց հանրապետութիւնը վերադարձնում էր միմիայն Վրաստանի անկախութիւնը հրատարակելու օրից պահուած գումարները, իսկ մնացածի համար նա իրեն պատասխանատու չէ համարում և տալիս է ռուս կառավարութեան հասցէին պահանջողական վկայականներ (кредиторскія удостовѣренія):

Չնայելով այս դեմոկրատիկ միջոցներին, երկաթուղու կառավարութեան մէջ և գծի վրայ դեռևս մնում էին բաւականին հայեր, այն էլ յայտնի պաշտօններ վարողներ, որոնց վրայ աչք ունէին անկած երկաթուղու կենտրոնական կոմիտէի «դեմոկրատիկ» անդամ-ընկերները: Եւ նրանք պատրաստ էին վնտռում իրենց այն նպատակն իրագործելու համար, երբ ծագեց հայ-վրացական պատերազմը: Այսպիսով ըստ ֆրանսիական առածի «ինչ որ մարդ փնտռում է, սատանան գտնում է», իրագործուեց «դեմոկրատիկ» ընկերների ցանկութիւնը: Հարկաւոր էր օգտուել առիթից: Եւ օգտուեցին փառաւոր կերպով:

Վրաց դեմոկրատիկ հանրապետութիւնը ցանկանալով ընդ միշտ ազատուել երկաթուղիների հայ ծառայողներից, հայ-վրացական պատերազմի առիթով հրաման արձակեց պաշտօնից հեռացնել բոլոր հայերին:

Պաշտօնից հեռացուեցին բոլոր հայերը՝ շատ չնչին բացառութեամբ. մնացին միայն այնպիսի հայեր, որոնք «տեղն եկաւ հայ են նրանք, տեղն եկաւ այլազգի»:

Այս վերջին կարգի արտաքսուածների վրայ կառավարութիւնը հրաժարւում է որևէ նպաստ տալ, առարկելով, թէ նրանք պետական ապահովութեան համար են արձակուած:

Այս անախորժ դրութեան վերջ տալու համար երկաթուղու հայ ծառայողները դիմել են Վրաստանի հանրապետութեան նախագահին խնդրելով կամ իրենց նորից պաշտօնի ընդունել և կամ տալ սահմանուած նպաստը՝ որպէս արձակուածների:

Ց. Վարդանեան

ՌԷՅՏԵՐԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Անգլիացիների Կովկասում հաստատուելուն հետ իր ճիւղն է բանում նախ Թիֆլիսում և ապա, անշուշտ, Կովկասի կարևոր վայրերում և Ռէյտերի հեռագրական գործակալութիւնը: Ուրիշ խօսքերով՝ հիմք է դրւում Կովկասում անգլիական արդիւնաբերական գործունէութեան:

Եւրոպական հեռագրական գործակալութիւնների մէջ ամենահեղինակաւորը Ռէյտերինն է, ապա գալիս է Հաւասի (Ֆրանսիա), Ստեֆանիի (Իտալիա), Վոլֆ (գերմանական): Վերջինիս հաղորդած լուրերը Եւրոպայում, նամանաւանդ Անգլիայում միշտ էլ ընդունուել են, դեռ պատերազմից տասնեակ տարիներ էլ առաջ, մեծ վերապահութեամբ, մինչդեռ Ռէյտերինը միշտ հաւատով:

Սրանից դեռ երեսուն տարի առաջ պարսից շահը երբ Լոնդոն էր եկել և անգլիացիները զանազան կոնցեսիաների ֆերմաններ էին ստանում, ինձ էլ առիթ եղաւ մի այդպիսին ստանալու, այն է՝ 40 տարով Պարսկաստանում անտառների շահագործումը և գինու ու արաղի մոնոպոլը: Ի դէմս իմ համակրութեան այդ մի աջակցութիւն էր, որ հայ կապիտալիստներին ևս պէտք է առաջարկէի: Եւ ահա այդ ժամանակ այս մասին ևս գրեցի մեր խնամի պ. Մարկոս Դոլուխանեանին, որ Փիթմանների և այլ, ըստ իր ցանկութեան, կապիտալիստների հետ այդ ակցիան ձեռք բերեն: Սակայն պ. Մարկոս Դոլուխանեանը ինձ գրեց, որ պարսկական ջրերում ձկան կոնցեսիան վերցնեմ: Այդ նպատակայարմար չգտանելով, որովհետև առանց այն էլ, այդ հայերի ձեռին էր վաղուց, պ. Ալ. Մելիք-Ազարեանց և ընկ.: Մեր խնդրական նպատակն էր, որ շատ հայեր ամեն բանից օգտուեն և ոչ թէ մէկի ձեռից վերցնուէր և միւսին տրուէր:

Անցան տարիներ: Նորից մի առիթ. ինձ առաջարկեցին Կովկասում Ռէյտերի գործակալութիւնն ստանձնել և բացի այդ Կասպից ծովի վրայ նաւագնացութեան գործը: Գնացի Բաքու խորհրդակցելու:

— Մեր, հայերիս վիզը կը կտրես, եթէ այդպիսի բան անես, համարեա միաբերան ասացին բաքուեցի կապիտալիստները, որոնց ¾-ը իմ մերձաւոր ազգականները և հայրենակիցներն էին (Աղամեան, Բէգլարեան, Ղուկասեան են են): Սրանք բոլորն էլ Կասպից ծովի վրայ շոգենաւեր՝ ունէին, և բնական է, Ռէյտերի ընկ. եթէ բերէր իր շոգենաւերը՝ սրանց մահացու հարուած պիտի տար: Եւ որովհետև նպատակս հայրենակիցներիս օգտակար լինելն էր և ոչ թէ դրանից նիւթական իմ շահուելը, ուստի և խափանեցի այդ առաջարկի ի կատար ածելը:

Միջանկեալ պէտք է ասեմ, որ ես նիւթականը երբեք չեմ համարել և այժմ էլ չեմ համարում խոհական հիմք անհատի, թէ ազգի, ժողովրդի բարօրութեան ու բարգաւաճման: Իմ համոզմամբ բարոյ ու երջանիկ կարող է լինել բարոյապէս դաստիարակուած անհատը, ազգը, ժողովուրդը: Եւ բարոյական ազգը միշտ կարող կը լինի գիտակցել իր գոյութիւնը պահպանելու: Բացէիբաց ես հակառակ եմ եղել և այժմ աւելի քան հակառակ եմ կապիտալի, որի աշխուժութիւնը այսօր աւելի քան ակներև է ամենքին:

Անցան տարիներ: Դարձեալ մի առիթ. Բորդոյում իմանալով ինձանից, որ Թիֆլիս քաղաքն սպանդանոց է ծրագրում շինելու, առաջարկեցին ինձ այդ սպանդանոցը ինչ մեծութեամբ էլ կամենայ քաղաքը կը կառուցանեն տեխնիկայի վերջին կատարելագործութեան համեմատ և բոլորովին ձրի, միայն թէ 30 տարով այդ սպանդանոցում մորթուած անասունների արիւնը տրուի իրենց: Այդ ժամանակ Թիֆլիսի քաղաքագլուխը իշխան Ջիրքվաձե էր, Բորդոյից թէ հեռագրեցի նրան և թէ գրեցի: Այն ժամանակուայ տեղական լրագրներում էլ այդ առաջարկի մասին տպուած է եղել: Սակայն Թիֆլիս քաղաքը այսպիսի մի առաջարկ թողեց անհետևանք: Հետաքրքրական է արիւնը ինչպէս է քաղաքը շահագործել մինչև այժմ:

Այդ միևնոյն տարին իշխան Ջիրքվաձին դարձեալ Եւրոպայից գրեցի առաջարկ՝ Թիֆլիսի հանքային ջրերի համար, կուրորտ դարձնելու, շրջակայքը վաճառելու եւրոպական ընկերութեան, հիւրանոցներ, կազինօ շինելու, բաղնիքները վերաշինելու են: Բայց այդ բոլորը մնաց ձայն բարբառոյ յանապատի մէջ:

Հազիւ տասը տարի սրանից առաջ Ներսիսեան դպրոցի տեսուչ պ. Յովսէփ Խունունցին առաջարկեցի Նաղլեբանի հողի վրայ նոր քաղաքամաս հիմնելու և այդ նպատակաւ Թիֆլ. Քաղաք. Վարկի ընկ., խոստանալով օբլիգացիաները Եւրոպայում ռէալիզէ անելու: Սակայն այդ էլ մնաց առանց իրագործման: Չէ՞ որ իմ աչքի առաջ, շնորհիւ Թիֆլ. Քաղ. Վարկի ընկ. կառուցուեց Միքայէլեան պրոսպեկտը, Դիդուբէն եւն, որ մինչև այնժամ այգի էին կամ խորճիթներ:

Անցան դարձեալ տարիներ: Ալպերի հիասքանչ կիրճերի մէկում՝ Ջեմերինգից ոչ հեռու, Պայերբախում եմ: Սրա շրջակայքում իմ աչքի առաջ անտառում փայտ են կտրում, եփում, հալեցնում, խմոր շինում և պատրաստում կարտոն, թուղթ: Այս մասին նորից գրում եմ պ. Մարկոս Դոլուխանեանին, հրաւիրում, որ գայ ինքն անձամբ տեսնէ, սովորէ և եթէ հաւանութիւն տայ՝ իսկոյն գնէ կարևոր մեքենաները, հենց այստեղ վարձենք մի քանի հմուտ մասնագէտ բանուորներ և գանք իր կալուածքում, Դամձասարի մօտ, Առաջաձորում, հիմնենք թղթի, կարտոնի գործարան: Սակայն պ. Դոլուխանեանին այն ժամանակ չէ հրապուրում թղթի գործարանը, այլ իր ուշադրութիւնն է հրաւիրում Տօնէտի գործարանները վիէննական աթոռներ պատրաստելուն: Այդ էլ ինձ չէ հրապուրում և մնում է տենչանքս անգործադրելի:

Վերադառնալով Կովկաս, պատմում եմ այս թղթի գործարանի մասին իմ մերձաւոր ազգական նաւթարդիւնաբերող (այժմ հանգուցեալ) վաղամեռ Գերասիմ Թումայեանին: Սրան հետաքրքրում է թղթէ գործարանը և ձեռնարկում կազմակերպութեան: Ապսպրում են մեքենաները, պահանջւում է գործարանը հիմնել գետի ջրից մօտ: Ընտրւում է այդ տեղը Կամենկա կայարանից ոչ հեռու Կամենկա գետի վրայ: Գերասիմ Թումայեանը գնում է այդտեղ ընդարձակ անտառ: Բայց շուտով պարզւում է, որ Կամենկա գետը ամառն խոպան չորանում է: Բայց մեքենաներն արդէն ստացւում են Թիֆլիսում: Չէ յուսահատւում վաղամեռ ձեռնարկող Գերասիմ Թումայեանը: Հրէայ միջնորդը իշխանուհի Օրբելիանու ձորի կալուածքն է առաջարկում գնել Բորչալուի գաւառում: Համաձայնում է և առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, գնում է Բորչալուում: Սակայն նոր դժբաղդութիւն: Բանից դուրս է գալիս, որ իշխանուհի Օրբելիանին վաճառել է կալուածքը Գերասիմ Թումայեանին, փողերը լրիւ ստացել, բայց նոյն կալուածքը երկար տարիներով տուել կապալով պ. Յակոբ Մելիք-Բախտամեանին, իսկ վերջինս էլ ոչ մի պայմանով չէ կամենում իր արտօնութիւնից զրկուել: Խնդիրը չլուծած յանկարծամահ է լինում Բաքւում Գերասիմ Թումայեանը փողոցում, պատահական մի պայթիւնից: Կործանւում է այս ձեռնարկը, մեքենաների երկաթէ մասերը գնում է պ. Համբարձում Մելիքեանը, իսկ Գերասիմ Թումայեանի այրին ու անչափահաս ժառանգները Բորչալուի կալուածքը հաշտութեամբ զիջանում են պ. Յ. Մելիք-Բախտամեանին:

Հենց այս պատերազմին, յեղափոխութիւնից առաջ, Մանչեստրից դարձեալ եղաւ ինձ առաջարկ՝ մանուֆակտուրիստներից հիմնել Ռուսաստանի հարաւային մասում գործարաններ են, որ ես յանձն չառայ և ժամանակին հաղորդել էի Թիֆլ. վաճառականապետի պաշտօնակատար պ. Սերգէյ Կաֆիեանին:

Անշուշտ այսուհետև աւելի շատ կը լինեն օտարներից առաջարկներ: Չհրապուրուենք օտարների առաջարկներով, եթէ մենք ամենաակտիւ մասնակցութիւն չենք ունենալու այդ ձեռնարկների մէջ, և պիտի լինենք սոսկ չարքաշ մշակներ միայն:

Ըստ իս Ամերիկային մենք պէտք է աւելի սիրտ ու ջերմ մօտենանք, որովհետև այսօր Ամերիկան է միայն, որ գիտակցին յատուկ պարտաճանաչութեամբ, ձեռք մեկնեց մեզ և փրկում է հայութեան բեկորներին սովի ճիրաններից:

Երեք տարի սրանից առաջ «Վան-Տոսպ»-ի մէջ տպագրեցի առաջարկըս, որ երկու հարիւր միլիոն դոլար Ամերիկայից պարտք վերցնենք գաղթականների համար, ինձ լսող չեղաւ: Մի՞թէ այսքան զոհեր կունենայինք մենք, եթէ ժամանակին միջոցներ լինէր մեր ձեռքին:

Տ. Նազարեան

ԱՌԵՒՏՐԱ-ԱՐԴ. ԿԵԱՆՔ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԵՏ

Առևտրա-արդիւնաբերութեան նախարարութիւնը աշխատում է Վրաստանի և Անգլիայի վաճառականական յարաբերութիւնները հարթել: Այդ առթիւ նախարարութեան կից գոյութիւն ունի ապրանքներ փոխանակելու կոմիտէ, որն այսօր, փետրուարի 8-ին, յատուկ խորհրդակցութիւն ունի, ուր կազմուել է այն ապրանքների ցուցակը, որոնք անհրաժեշտ են Վրաստանին և պէտք է բերուեն Անգլիայից:

Խորհրդակցութեան հրաւիրուած են նաև առևտրա-արդիւնաբերական կազմակերպութեան ներկայացուցիչները:

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի շրջանի գործարանատէրերի և զաւոդչիկների ընկերութիւնը ներկայումս վերջացնում է լայն սկզբունքների վրայ դրուած բանուոր ձեռնարկութիւնների ծառայողներին բժշկական օգնութիւն հասցնելու կազմակերպութիւնը: Արդէն կազմուած է սեփական ամբուլատորիա: Բժշկական օգնութիւն հասցնելու համար հրաւիրուած են տեղական բժշկական յայտնի ոյժեր:

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐԻ ԵՒ ԶԱՒՈԴՉԻԿՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, փետրուարի 9-ին, Ա. Էնֆիաջեանցի նախագահութեամբ նշանակուած է Թիֆլիսի արդիւնաբերական շրջանի գործարանատէրերի և զաւոդչիկների տարեկան ժողովը: Կը քննուեն 1918 թուի գործունէութեան հաշիւները և 1919 թուի նախահաշիւը:

ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԵՒ ԶԱՒՈԴՆԵՐԻ ՆԻՒԹԵՐԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ

Ներկայումս Թիֆլիսի գործարաններն և զաւոդները հեղուկ վառելիքի կարիք չեն զգում, որովհետև հում նաւթը ստացւում է բաւական քանակութեամբ: Դրա համար էլ հեղուկ վառելիքի գները ընկել են:

Մնացած նիւթերի (իւղ, բենզին, կերոսին և այլն) կարիքը, առաջուայ նման, շատ զգալի է, նրանց կանոնաւոր չստացուելու պատճառով, որոնց գները դեռ բարձր են: Այդպէս՝ իւղը մասնաւոր շուկայում, գնահատւում է 110-ից մինչև 135 ռուբլի փութը, բենզինը տարածւում է 150-ից մինչև 200 ռուբլի, իսկ բենզինը մեծ քանակութեամբ առնելու համար 90-ից մինչև 120 ռուբլի փութը:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԵՒՏՐԱ-ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Վրաստանի առևտրա-արդիւնաբերական պալատի ընտրութիւնների հետևանքները տակաւին անյայտ են: Վրաց առևտրա-արդիւնաբերական միութիւնը, որը անօրինում է այդ ընտրութիւնները, մինչև այժմ չէ յայտարարում ընտրութիւնների հետևանքը, մինչև իսկ Թիֆլիս քաղաքինը: Թէև իւրաքանչիւր ընտրող շրջան առանձնապէս է կատարում պալատի անդամների ընտրութիւնները, սակայն ձայների հաշուեառութիւնը յետաձգւում է մինչև միւս շրջանների ընտրութիւնների հետևանքներն ստանալը: Վրաց առևտրա-արդիւնաբերական միութեան մէջ, ներկայումս, հաշւում են Քութայիսից ստացուած ընտրութիւնների թիւը:

Թիֆլիսի մի քանի լրագրների տեղեկութիւնները Թիֆլիսի քաղաքի պալատի անդամներ ընտրուելու համար անհիմն են:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏ.

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

«Դատաստան».—Դ. Դեմիրճեանի դրամայի միակ թերութիւնը ցրուածութեան և փոքր ինչ էլ ձանձրալի ձգուածութեան մէջ է. իսկ հանգոյցը նորութիւն է և ըստ ամենայնի արժէքաւոր: Այս մասին աւելորդ կը լինի երկար կանգ առնել, որովհետև այս ուղղութեամբ քննադատական հրապարակն արտայայտուել է գրեթէ ամենուրեք. միայն աւելացնենք, գուցէ և կրկնելու ենք, որ պէտք է դրաման փոքր ինչ սեղմուի և խտանայ, իսկ բեմի վրայի աղմուկներին կամ պիտի լինի վերջ և կամ մինիմում մեղմացում, որովհետև աղմուկի չկլան պէտք է ի վերջոյ մեռնի նոր դրամայում, որ մի հրամայական, ներքնական պահանջ է՝ ի գիտաց հասարակական արթուն ջիղերի:

Դառնանք խաղին:

Ամօ-Խարազեան կլասիկի դերասան է. այդ իսկ պատճառով էր, որ ամսիս 6-ի երեկոյեան ներկայացման Թոմասի «սուտ-ճգնաւորական, կեղծ, դիմակաւոր հոգին արտայայտուեց աւելի իդէալական, քան նիւթական, հոգեկան զգացիկ նրբութեամբ, բայց ոչ վարպետ խառնուրդով. նրա սէրը երդիկոտ էր, մաքուր, այն ինչ Թոմասի պէս մարդը չի հանդիպում բանաստեղծական վայելքով, վասն զի նա խաբեբայ է, կեղծող և [illegible] օժտուած:

Դուլգարեան [illegible] էր միաժամանակ Թանգիկի մաքուր, մանկական հոգին, բայց ընդհանրապէս կոկէտ էր, շարժ ու ձևը դուր գալու համար, իսկ երբեմն նոյն իսկ բալէտային: Թանգիկը մի անմեղութիւն է, որ մինչ գրեթէ յիմարացման աստիճան չէ գիտակցում իր գեղեցկութիւնը, սէրը, անէլքը:

Ցամիկ անզուգական է ինքնուրոյն տիպերի վերաբերմամբ. ծայր աստիճան բնական, սահուն, առանց աւելորդ շարժումների, չափաւոր և, մանաւանդ, ստեղծագործող է առանձնապէս հայ կանանց ուրուագծելու մէջ. Սիրվարդի դերը նրա առաջին սեփականութիւնն էր:

Միրզոյեան ևս նոյն ոգևորութեամբ պատկերացրեց օպերետային գիւղացու, հպարտ, ինքնավստահ Աղամ-Մելիքի դէմքը. այս անգամ էլ յատուկ ուշադրութիւն էր կլանում նրա համապատասխան գրիմը ու հանդերձանքը:

Բերոյեան պակասաւոր արտայայտութիւն էր Նազաշի բանաստեղծ, նրբալուր ապրումների դիմաց:

Մարի չնայած իր ճիգերին, այնուամենայնիւ սառն էր՝ Հասմիկ կրակոտ, կենսալից բնաւորութեան համեմատութեամբ:

Սամամեանին հայկական, մանաւանդ խարակտերիկ - հայկական, տիպեր չի բռնում. Պօղոսը նրա ձեռքում վերածուեց խրտուիլակի, որ խօսում է այնպէս, ինչպէս մեքենայի պտուտակն է թելադրում:

Մելիք-Շահնազարեան շարունակում է չտարբերել պիեսին արտասանելուց, խաղը «պլաստիկայից», դրաման կոմեդիայից և կոմեդիան դրամայից: Եսթերի խաղն, սառուածակեր, առօրեայ, հասարակ տիպն անգամ չյաջողեց դուրս գալ իր կեղծ-դասական առոգանութիւնից, դատապարտելի պաթոսից:

Դաւոօ (Կլերիկ) պահպանում էր անսամբլը:

Ի դէպ. «Յիմարի» մասին գրած մեր ռեցենզիայում, խօսելով հայ դերասանների բաբելոնեան հայերէնի մասին, հետևում է, որ «Այդ Երեւոյթի առաջին կատեգորիայում էր Ալիխանեան-Իւարբ», այն ինչ՝ պէտք է լինի. «Այդ երեւոյթի առաջին կատեգորիայում էլ Ալիխանեան—Իւսոբ» և այլն:

Գ—է

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Հրատարակիչ՝ Հայ ժողովրդական Կուսակցութիւն

ՍՏԱՑՈՒԱԾ ՆԱՄԱԿՆԵՐ

Մեր խմբագրութեան հասցէով Բաքուից ստացուած են հետևեալ նամակները.

1) Нинѣ Александровнѣ Питоевой, 2) Յովսէփ Խունունցին և 3) Kambis Sarian-ին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ"-Ի
գրասենեակում վաճառւում է նրա հրատարակութեամբ լոյս տեսած
ԳԷՈՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
ՁԵՄՍՏԻՈՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
ԳԻՐՔԸ
Գինը 50 կոպէկ:
Դիմել գրասենեակ՝ Головинскій пр. № 25. 0—16

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ
ԴՊՐՈՑ
ԵՒ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒ ՀԱՇՈՒԱ-ՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Հայերի մէջ առևտրական կրթութիւն տարածող Կովկասեան ընկերութեան:
Նիկոլայեւսկի № 36: ◆ Կիսամեայ դպրոցի վճարը 75 ռուբ. ◆ Ուսանողների 25 տոկ. ձրի է: 0—27

Տպարան «Մամուլ»—կապալ. Մ. Եփրիկեան և Ց. Մայիլեանի Լօրիս-Մելիքեան փող., № 22.